

## ՄԻ ԴՐՎԱԳ ՀՈՌՄԿԼԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՀԻՄԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

### ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայ եկեղեցու պատմության ուսումնասիրությունը հայագիտության կարևոր հարցերից մեկն է: Նրանում առավել կարևոր նշանակություն ունի Հռոմկայի կաթողիկոսարանի հիմնադրման և հետագա տասնամյակների պատմության հետազոտությունը: Տասնամյակների ընթացքում բավականին ուսումնասիրություններ են կատարվել Կիլիկյան շրջանի՝ այսինքն 11-14-րդ դարերի հայ եկեղեցու պատմության տարբեր շրջանների և դեպքերի վերաբերյալ: Հարկ է նաև նշել, որ Հռոմկայի կաթողիկոսարանի պատմության ուսումնասիրության մի շարք կարևոր հարցեր մինչև օրս էլ մնացել են անավարտ և մի շարք հարցերին տրված չեն սպառիչ պատասխաններ: Մեր ներկա հետազոտությունը նվիրված է այդ բացը լրացնելուն:

Հայտնի է, որ Բագրատունիների հայկական թագավորության կործանումից հետո՝ 1045 թ., հայ ժողովուրդը հայտնվում է բավականին ծանր վիճակի մեջ: Բավականին դժվար իրավիճակ է ստեղծվում նաև հայ առաքելական եկեղեցու համար, քանի որ պետականության անկման պայմաններում կաթողիկոսարանը հայտնվում էր բավականին հեղհեղուկ և ծանր վիճակում: Նրա գործունեությունը ավելի վատացավ այն ժամանակ, երբ տասնյակ հազարավոր հայեր սկսեցին թողնել պապենական հողերը և գաղթել օտար երկրներ, մասնավորապես հարևան Վրաստան, բյուզանդական կայսրության տարածքը և այլ երկրներ: Իր հերթին, բյուզանդական կայսրությունը, հայոց կաթողիկոսությունը դիտելով որպես հայկական թագավորության անկումից հետո հայ հոգեոր և քաղաքական ուժերը միավորող ամենահզոր կառույցը, հետևողականորեն փորձում էր իրականացնել հայ եկեղեցու գլխատման իր նենդ և չարագործ ծրագիրը: Միակ հեռանկարը, որ տեսնում էր բյուզանդական կայսրությունը վերը նշյալ հարցում, կաթողիկոսությանն ինքնուրույնությունից զրկելը և Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռի ենթակայության տակ մտցնելն էր<sup>1</sup>: Նույնիսկ այդ քաղաքականությունը շարունակվեց կիրառվել 11-րդ դարի երկրորդ կեսերին և 12-րդ դարում, երբ բյուզանդական կայսրությունը գնալով սկսեց թուլանալ իր քաղաքական հակառակորդների հարվածներից:

<sup>1</sup> Գ. Ալավերդյան, Հայ եկեղեցին և հայոց կաթողիկոսարանի եկեղեցա-քաղաքական կարգավիճակը ԺԲ դարում, վերցված է [http://hbjj.asj-oa.am/2694/1/2009-2-3\(120\).pdf](http://hbjj.asj-oa.am/2694/1/2009-2-3(120).pdf) կայքից, 1.10.2013 թ.:

Վերադառնալով քննարկվող խնդրին՝ նշենք, որ քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով հայրապետական աթոռը սկսում է դեգերել նաև Կապաղովկիայի, իսկ հետագայում նաև Կիլիկիայի տարածքում:

**Այսպես,** 1065 թ. Գագիկ Աբբասյանը կաթողիկոսության հարցը լուծում է հետեւյալ կերպ: Լեռնային Կիլիկիայի Ծամնդավ<sup>1</sup> կոչված վայրում գումարում է ժողով, որտեղ նոր կաթողիկոս է ընտրվում Գրիգոր մագիստրոսի որդի Վահրամը<sup>2</sup>, որն էլ համարվում է Պահլավունիների կաթողիկոսական տան հիմնադիրը: Նշենք նաև, որ Վահրամը ստանում է Գրիգոր անունը: Այստեղ հարց է առաջ գալիս, թե ինչու Գրիգոր կաթողիկոսը Գագիկ Աբբասյանի օգնությամբ իր աթոռը հաստատեց Հայոց բնաշխարհից դուրս՝ Գագիկ Աբբասյանի նստավայր Ծամնդավում, որտեղ մնաց մինչև 1090 թվականը, որից հետո տեղափոխվեց (Քեսունի Կարմիր վանք 1090-1116): Խնդիրը շատ պարզ էր, քանի որ այդ ժամանակ սելջուկ-թուրքերը գրավելով մի շարք երկրներ, մտել էին նաև Հայաստան և այնտեղ կաթողիկոսական աթոռի մնալը շատ վտանգավոր էր: Բացի այդ Ծամնդավ տեղափոխելու հարցում շահագրգիռ էր նաև բյուզանդական կայսրությունը: Ամեն դեպքում Ծամնդավում հայոց կաթողիկոսությունը ծավալեց որոշակի գործունեություն, մինչև հայրապետական աթոռին բազմեց ժամանակի նշանավոր դեմքերից մեկը՝ Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսը:

**Այսպես,** 1113 թ. հայոց կաթողիկոս է դառնում Գրիգոր Գ Պահլավունին (1113-1166), որի անվան հետ է կապված կաթողիկոսության տեղափոխումը նոր նստավայր Հռոմեա ամրոցը:

**Այսպես,** Քեսունի իշխանության կործանումից հետո Գրիգոր Գ. Պահլավունին հայրապետական աթոռը տեղափոխում է նաև Ծովքի դղյակը (1116-1149)<sup>3</sup>, որտեղ կաթողիկոսարանը մնաց մինչ 12-րդ դարի կեսերը, երբ Գրիգոր Գ Պահլավունին ամենայն հայոց կաթողիկոսարանը տեղափոխեց Հռոմեա բերդաքաղաք<sup>4</sup>: Եվ Հռոմեայում հաստատված Գրիգոր Գ

<sup>1</sup> Ծամնդավը բերդաքաղաք է Փոքր Հայքում, համանուն գավառի կենտրոնը, Կեսարիա քաղաքից արևելք: 1065 թ. այն նտուր էր Գագիկ Աբբասյանի տիրույթների մեջ:

<sup>2</sup> Վարդան Արմելցի, էջ 102:

<sup>3</sup> Ծովքի դղյակը մեր պատմչները նատնանշում են զանազան վայրերում. առաջին տեսակետի համաձայն այն գտնվում է Չորրորդ Հայքի Ծոփաց աշխարհի մեջ, իսկ երկրորդ տարբերակի համաձայն վերը նշված տարածքի անվանումը աշխարհագրագետները տեղադրում են Անտիոքի իշխանության տակ գտնվող Տիուք գավառի մեջ: Բայց ամեն դեպքում հետազոտողների ճնշող մեծամասնությունը նախապատվությունը տալիս են առաջին տարբերակին, այդ նաևին ավելի մանրանասն տես Մ. Յովիաննիսյան, Յայկական Կիլիկիոյ բերդերն և բերդաքաղաքները, Վենետիկ, 1989, էջ 446:

<sup>4</sup> Վ. Վարդանյան, Պահլավունիները հայոց պետականության և հոգևոր անդարտության պահպաններ, Երևան, 2008, էջ 137, Մ. Օրմանյան, հ. Ա, սյուն 1607:

կաթողիկոսն այլևս չմտածեց Կիլիկիա գնալու մասին։ Ինչու կաթողիկոսը որոշեց կաթողիկոսարանը տեղափոխել Հռոմելա, որն էր կաթողիկոսարանի տեղափոխման իրական թվականը և ինչ դեր կատարեց Հռոմելայի հայրապետանոցը հայության և մասնավորապես հայ եկեղեցու կյանքում։ Ահա այս բոլոր հարցերի պատասխանները մենք կփորձենք տալ մեր ներկա հետազոտության մեջ։

Հայտնի է նաև որ, ուսումնասիրողներից ոմանք հայրապետական աթոռի տեղափոխումը Հռոմելա դիտում են որպես Ռուբինյանների կողմից հայկական պետականության ձևավորմանն ուղղված քայլ այնքանով, որ Հռոմելայում կաթողիկոսությունն ազատվում էր Կ. Պոլսի պատրիարքության ազգեցությունից<sup>1</sup> և ճնշումներից։ Դրանով նաև հնարավոր էր դառնում «Եկեղեցին ներգրավվել կառավարման համակարգում և ուղղակի արդյունավետ վերահսկողություն սահմանել նրա գործունեության նկատմամբ, քանի որ Հռոմելան վարչական առումով Հայաստանից դուրս էր։ Եվ այս իրադարձությունը չափազանց կարևոր էր հայության կյանքում, քանի որ այս պատմաշըջանում, երբ հայությունը չուներ պետականություն, կաթողիկոսարանը ժողովրդին միավորող միակ իրավական իշխանությունն էր, «պետություն» էր պետականությունը կորցրած ժողովրդի համար։ Կաթողիկոսարանը վեր էր կանգնած Կիլիկիայում և այլուր իշխանության հասած բոլոր հայկական իշխանական տներից և երբեմն միջնորդ դատավորի դեր էր ստանձնում միմյանց դեմ կռվող հայ իշխանների միջև բորբոքված երկպառակտչական պատերազմները դադարեցնելու մտահոգությամբ։ Եվ այս դրությունը թույլ էր տալիս նրան հանդես գալ ողջ ժողովրդի նկատմամբ, միավորել հայկական իշխանությունների ուժերը՝ իրագործելու համար պետականությունը կորցրած ժողովրդի քաղաքական ձգտումները։

Այսպիսով՝ պետք է նշել, որ կաթողիկոսարանի դեպի Հռոմելա տեղափոխման պատճառների մեջ կարելի է նշել այն կարևոր հանգամանքը, որ այն իրոք կազատվեր բյուզանդական կայսրության ճիրաններից և իրեն ավելի ապահով կզգար։ Մյուս կարևոր գործոնը այն էր, որ սելջուկ-թուրքերը գրավելով Արևելյան Հայաստանը, շուտով մոտենում են նաև Ծոփաց աշխարհին։ Ճիշտ է, հայ իշխանները կարողանում էին ժամանակ առ ժամանակ լեզու գտնել նոր նվաճողների հետ և խաղաղ ապրել, սակայն մերժընդ մերժ այնտեղ էլ էին բախումներ լինում և վտանգ էր ներկայացվում Ծովքի համար։ Հավանաբար հենց դա էր պատճառը, որ Գրիգոր Գ կաթո-

<sup>1</sup> Գ. Հարությունյան, Դիտողություններ Կիլիկիայում հայկական պետականության առաջացման շուրջ, «Հայոց պատմության հիմնահարցեր», Երևան, 2005, էջ 228:

դիկոսը և իր եղբայրը որոշում են թողնել այս տարածքը և տեղափոխվել գեղի արևմուտք, որը տվյալ պահին ավելի անվտանգ էր: Եվ այդ մասին է վկայում նաև Հետազոտող Մ. Հովհաննիսյանը, ով կարծիք է հայտնում, որ հայոց կաթողիկոսի Հոռոմկա տեղափոխման հարցում կարեոր դեր էր կատարել այն հանգամանքը, որ Ծովքի դդյակը այդքան ապահով և անվտանգ վայր չէր, շրջապատված էր թշնամիներով և այնքան էլ անառիկ չէր, ի տարբերություն Հոռոմկայի բերդաքաղաքի<sup>1</sup>: Կարելի է համաձայնվել Հետազոտողի վերը նշված կարծիքի հետ, քանի որ իրոք Հոռոմկայի ընտրությունը շատ բարեհաջող էր ընտրված:

Ի վերջո գալիս ենք այն եղբակացության, որ կաթողիկոսարանը Ծովքի դդյակից Հոռոմկա է տեղափոխվել մի շարք պատճառների հետևանքով և մասնավորապես՝

1. Ժամանակի ընթացքում քաղաքական ասպարեզ իջած սելջուկ-թուրքերը մոտեցան այս տարածաշրջանին և վտանգ ներկայացրին նաև Ծովքի կաթողիկոսարանի համար:
2. Կաթողիկոսարանի Հոռոմկա տեղափոխումով այն բավականին ազատվում էր Պոլսի պատրիարքական աթոռի ազդեցությունից:
3. Նշված տեղափոխումը օգտավետ էր նաև Ռուբինյանների համար, քանի որ վերջիններս կկարողանային եկեղեցին ներգրավել «պետական կառավարման համակարգին»:

Շարունակելով մեր հետազոտությունը՝ նշենք, որ կաթողիկոսարանի տեղափոխման մասին խոսում են միջնադարի ճանաչված պատմիչներ Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Սմբատ Սպարապետը և շատ ուրիշներ: Այսպես՝ պատմիչ Կիրակոս Գանձակեցին հետեւյալն է նշում այդ մասին. « Գոխեաց զաթոռն հայրապետական ի բերդն, որ կոչի Հոռոմկայ... »<sup>2</sup>: Ինչպես նկատում ենք, Կիրակոս Գանձակեցին բավարար տեղեկություններ չի հաղորդում վերը նշված խնդրի վերաբերյալ: Դրան զուգահեռ Վարդան Արևելցին էլ ավելացնում է, որ «Այն ժամանակ հայոց աթոռը շրջելով բազմաթիվ վայրերում՝ կարմիր վանքում, Շուղրում, Ծովքում, գնում, դադար է առնում այն դդյակում, որ կոչում է Հռոմկա»<sup>3</sup>: Կարողիկոսարանի Հռոմկա տեղափոխման մասին մեզ առավել ընդրգկուն տեղեկություններ է հաղորդում Կիլիկյան Հայաստանի հայտնի սպարապետ, օրենսդիր և պատմիչ Սմբատ Սպարապետը, ըստ որի Գրիգոր Գ սկզբնական շրջանում որոշում է գնալ Արևելք՝ պայմանավորվելու վրաց արքայի հետ՝

<sup>1</sup> Մ. Հովհաննիսյան, Եշվ. աշխ., էջ 431:

<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 108:

<sup>3</sup> Վարդան Արևելցի, էջ 174:

կաթողիկոսարանը Անի տեղափոխելու համար<sup>1</sup>, որը որոշակի առումով անվտանգ կարող էր լինել, քանի որ այն ժամանակ Անին մտնում էր վրացական թագավորության կազմի մեջ: Ճանապարհին, երբ համում է եղեսիա, Գրիգոր Գ կաթողիկոսը հանդիպում է կոմս Ճոսլինի կնոջը՝ Բիաթրիսին, որն իմանալով կաթողիկոսի մտադրության մասին՝ խորհուրդ չի տալիս տեղափոխվել Անի, այլ առաջարկում է կաթողիկոսի տրամադրության տակ տալ Հռոմկան, որը շատ անառիկ բերդ էր և որ իրենք, անհրաժեշտության պահին կարող էին օգնության համեմ:<sup>2</sup> Կաթողիկոսը լսելով այդ առաջարկը շատ ուրախանում է, տալիս է իր համաձայնությունը և վերադառնում Ծովքի դղյակը՝ այդ մասին տեղյակ պահելով նաև իր եղբորը՝ Ներսեսին: Դրանից հետո Գրիգոր Գ Պահապունին կաթողիկոսարանը տեղափոխում է Հռոմկան: Որոշ ժամանակ անց Պահապունիները վճարում են 15 000 դահեկան, որից հետո Ճոսլինը նրանց կտակ տվեց, համաձայն որի Հռոմկան այսուհետ հանդիսանալու էր Պահապունիների սեփականությունը: Պետք է նաև նշել, որ Հռոմկան չէր ենթարկվում ոչ լատիններին և ոչ էլ այլազգիներին՝ հայոց կաթողիկոսներն աշխատում էին երկու կողմերի հետ էլ հաշտ ապրել՝ երբեմն միայն նվերներ մատուցելով: Զեռք բերելով ամրոցը՝ կաթողիկոսն ու իր եղբայրը Հռոմկան վերածեցին հայրապետանոցի և այնտեղ կառուցեցին գմբեթակիր կաթողիկե եկեղեցին՝ իր հարակից շինություններով: Միջնադարյան աղբյուրներից Սմբատ սպարապետը Հռոմկայի գնման մասին հետեւյալն է գրում. «և ապա առեալ զամենայն ինչս իւրեանց և զազգ, գնացին ի Հռոմկայն և ամրացան յահէ անօրինացն. և զկնի ժամանակաց ետուն Ճոսլինին ժեռ 15.000 դահեկան ի գինն Հռոմկային: Իսկ կոմսն Ճոսլինն ետ տէր Գրիգորիսի և տէր Ներսիսի զգիր ձեռին իւրոյ՝ զի Հռոմկայն յաւիտեան մնացէ աթոռ հայրապետացն Հայոց, և նոքա եղին զնոյն գիր յարկեղ սրբոյ աթոռոյն ի յիշատակ ապագայիցն, զի մի ոք եկեալ յազգայնոցն...»<sup>3</sup>: Ինչպես նկատում ենք, Սմբատ սպարապետը այն եղակի պատմիչներից մեկն է, ով բավականին մանրամասնորեն ներկայացրել է Հռոմկայի կաթողիկոսության տեղափոխման պատմությունը: Այստեղ հարց է առաջ գալիս նաև, թե ինչո՞ւ այդ ժամանակ Գրիգոր Գ Պահապունին կաթողիկոսարանը չտեղափոխեց Սիս, որտեղ Ռուբինյանները գնալով օրի ավելի էին հզորանում: Պատասխանը շատ պարզ էր: Հոգեոր իշխանությունը ոչ մի ցանկություն չուներ ենթարկվելու աշխարհիկ իշխանությանը, ուստի և գերադասում էր հնարապորին

<sup>1</sup> Սմբատ Սպարապետ, էջ 168-169:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

չափ պահպանել իր անկախությունը: Նշենք նաև, որ կարճ ժամանակ անց Հռոմէլլա ամրոցը<sup>1</sup> ենթարկվեց ոչ թե բյուզանդացիներին, որոնք այդ շրջանում բավականին ուժգին կերպով փորձում էին իրենց ենթարկել մեր եկեղեցին, այլև Հալեպի աթաբեկությանը:

Այսպես, հայտնի է, որ գեռես 1151 թ. Եղեսիայի կոմսությունը, դադարում է գոյություն ունենալուց և նրա նախակին տարածքները, այդ թվում և Հռոմէլլան հայտնվում են Հալեպի աթաբեկության իշխանության տակ և ստիպված լինում ընդունելու նրա գերակայությունը: Կարծում ենք, որ նման պայմաններում, երբ մշտական վտանգ կար բյուզանդական կայսրության կողմից եկեղեցիների միության հարցում, Հալեպի աթաբեկության տիրապետության տակ ընկնելը կրոնական հարցերում որևէ խնդիրներ չեր առաջացնի հայոց կաթողիկոսարանի համար: Եվ հետագա տասնամյակների պատմություններն էլ ցույց տվեցին, որ Պահավունի կաթողիկոսների հաշվարկները շատ ճշգրիտ գտնվեցին:

Պատմագիտության տեսանկյունից շատ կարեոր է նաև ճշտել, թե երբ է Հռոմէլլան վերածվել հայոց հայրապետանոցի: Նախ տեսնենք, թե ինչպիսի տեղեկություններ կան նշյալ խնդրի շուրջ միջնադարյան աղբյուրներում:

Այսպես՝ վերը նշված խնդրի շուրջ բավականին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Սմբատ սպարապետը և այն թվագրում է 1150 թվականով<sup>2</sup>: Ի տարբերություն Սմբատ սպարապետի, միջնադարյան հեղինակներից Վարդան Արևելցին էլ այս կարեոր գեպքը թվագրում է վեց հարյուր տասը թվականով, որին եթե գումարենք 551 կամ 552, ապա ստանում ենք 1161 կամ 1162 թվականները: Ակնհայտ է, որ հիշյալ պատմիչի հաղորդած տեղեկությունը չի կարող ճշմարիտ լինել և շատ հավանական է, որ նա ինչ-որ դեպքի հետ այն շփոթել է<sup>3</sup>: Կաթողիկոսարանի տեղափոխման մասին խոսում է նաև Կիրակոս Գանձակեցին, որը կաթողիկոսարանի տեղափոխման և Գրիգոր Գ կաթողիկոսի գործունեությունը տալիս է հայոց ՇԿԲ տարով<sup>4</sup>: Տոմարական հաշվարկներից պարզ է, որ այն համարվում է 562 թվականը և եթե դրան էլ գումարում ենք 551 կամ 552 թվականը, ապա ստանում ենք 1113 կամ 1114 թիվը: Անշուշտ, այս թվականը որևէ կապ չունի Հռոմէլլայի կաթողիկոսարանի տեղափոխման թվականի հետ և այն հակասում է մեր ունեցած մյուս աղբյուրների տեղեկություններին: Ամենայն հավանականությամբ այս թվականը իրականում ոչ թե կաթողիկո-

<sup>1</sup> Հռոմէլլան գտնվում է Կիլիկիայի արևմտյան սահմանին, շոշապատված է մի կողմից Եփրատի, իսկ մյուս կողմից Մարզման գետակի ջրերով, Մ. Յովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 431:

<sup>2</sup> Սմբատ Սպարապետ, էջ 168-169:

<sup>3</sup> Վարդան Արևելցի, էջ 172-174:

<sup>4</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 108:

սարանի Հռոմկլա տեղափոխման թիվն է, այլ Գրիգոր Գ Պահապունու ա-թոռակալման թվականը և հավանաբար դա է պատճառը, որ Կիրակոս Գանձակեցին այս բոլոր իրադարձությունները գրանցել է հենց վերը նշված տարեթվով:

Բացի վերը նշված հեղինակներից, մյուս պատմիչների մոտ բացակայում են կաթողիկոսարանի տեղափոխման մասին տեղեկությունները, կամ էլ դրանք չունեն էական նշանակություն:

Ինչպես նկատում ենք, միջնադարյան պատմիչների ընձեռած տեղեկությունները բավականին աղքատիկ են և թույլ չեն տալիս էական եզրակացություններ կատարել:

Վերադառնալով Հռոմկլայի կաթողիկոսարանի տեղափոխման խնդրին՝ նշենք, որ չկա հետազոտողների կողմից միանշանակ ընդունված կարծիք բերդաքաղաքի թվականի տեղափոխման մասին:

Այսպես՝ ժամանակակից հետազոտողներից Տ. Տէր-Ղազարյանը կաթողիկոսարանի տեղափոխման թիվը թվագրում է 1149 թվականով<sup>1</sup>: ի տարբերություն Տէր-Ղազարյանի՝ Մ. Հովհաննիսյանը գտնում է, որ Հռոմկլայի կաթողիկոսարանի հիմնադրման տարեթիվ կարելի է համարել 1250-1251 թ.<sup>2</sup>: Թեև իր ուսումնասիրության մի այլ հատվածում էլ նշում է, որ որոշ պատմիչներ այն թվագրում են 1147 թվականով, սակայն չի հստակեցնում թե որ պատմիչի մասին է խոսքը<sup>3</sup>: Ի տարբերություն Մ. Հովհաննիսյանի և Տ. Տէր-Ղազարյանի, նորագույն շրջանի ճանաչված գիտնականներից Վ. Վարդանյանը Հռոմկլայի տեղափոխման և կաթողիկոսարանի հիմնադրման թվականը նշում է 1150 թ.<sup>4</sup> Հետազտողներին դնելով բավականին ծանր վիճակի մեջ: Կաթողիկոսարանի տեղափոխման մասին նույնանման կարծիքն են հայտնում նաև Մ. Զամշյանցը<sup>5</sup> և Ս. Բուռնազյանը<sup>6</sup>, որոնք հիշյալ դեպքը թվագրում են հենց 1250 թվականով: Ինչ-ինչպես նկատում ենք, հետազոտողների կարծիքները նշյալ խնդրի շուրջ շատ հակասական են: Հետաքրքիր է նաև Կ. Մութաֆյանի տեսակետը, համաձայն որի հեղինակը իր աշխատության մի հատվածում նշում է, որ Բեատրիս դը Կուրտնէն 1150 թ. Հռոմկլան կարծես վաճառում է կաթողիկոսին, իսկ ահա մեկ այլ հատվածում՝ մի քանի տող ներքեւ նշում է, որ կա-

<sup>1</sup> Կ. Տ. Տէր-Ղազարյան, Հայկական Կիլիկիա, Տեղագրութիւն, Անթիլիաս, 1966, էջ 92:

<sup>2</sup> Մ. Հովհաննիսյան, նշվ., աշխ., էջ 439:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 439:

<sup>4</sup> Վ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 137:

<sup>5</sup> Մ. Զամշյանց, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 72:

<sup>6</sup> Հայ ժողովողի պատմություն, հ. Գ, Ակադեմիական հրատարակություն, Երևան, 1976, էջ 511:

թողիկոսարանը Հռոմեայում է մնում 1149-1292 թվականներին<sup>1</sup>: Նմանատիպ տեսակետ է հայունում նաև Հայ եկեղեցու պատմության ճանաչված մասնագետ Մ. Օրմանյանը, ով նախ նշում է, որ. «Այս փոխադրությունը յարմար է նշանակել 1149-ին, ձուլինի գերութեան և մահուան տարին»<sup>2</sup>: Այնուհետև աշխատության մի այլ հատվածում հետազոտողը նշում է, որ Հռոմեան որպես սեփականություն հայոց կաթողիկոսների կարելի է համարել 1150 թվականը. «Մեր տեսութեամբ հազիւ թէ տարի մը Հռոմեայ իբր ավանդ մնացած կրնայ ըլլալ կաթողիկոսին ձեռքը եւ 1150-է կրնանք հաշուել տիրապետութեան սկիզբը, որով կաթողիկոսներ ավատապետ իշխանի դիրքը ստանձնեցին իրենց բերդին մէջ...»<sup>3</sup>: Նմանատիպ կարծիք է հայունում նաև Ա. Սուբիասյանը<sup>4</sup>:

Բացի վերը նշված հետազոտողների կարծիքներից, գոյություն ունի ուսումնասիրողների մի խումբ էլ, որոնք հասկանալով խնդրի բարդությունը, ինչպես նաև միջնադարյան սկզբնաղբյուրների տեղեկությունների սակավությունը, գերադասել են միայն նշել կաթողիկոսարանի տեղափոխման մասին և ոչ մի խոսք չեն նշել տեղափոխման թվականի մասին:

Ինչպես նկատեցինք կարծիքները վերը նշյալ խնդրի շուրջ շատ հակասական են:

Այսպիսով՝ ուսումնասիրելով միջնադարյան սկզբնաղբյուրների տեղեկությունները, ինչպես նաև ժամանակակից գիտական գրականությունը գալիս ենք այն եղրակացության, որ կարելի է համամիտ լինել Մ. Օրմանյանի և Ա. Սուբիասյանի և Կ. Մութաֆյանի կարծիքներին: Այսինքն ամենայն հավանականությամբ Հռոմեայի կաթողիկոսարանի տեղափոխումը տեղի է ունեցել հենց 1149 թվականին, սակայն այն գնվել և Պահակալունի կաթողիկոսների սեփականությունն է համարվել սկսած 1150 թվականից: Հավանաբար հենց դա է պատճառը, որ հետազոտողների մի մասը կաթողիկոսարանի տեղափոխման թիվը համարում են 1149 թ., իսկ մյուս մասը այն թվաքրում են 1150 թ.:

Եվ վերջում կցանկանայինք ավելացնել նաև այն փաստը, որ Գրիգոր Գ կաթողիկոսը և իր հաջորդները Հռոմեայի ամրոցին տիրում էին որպես անկախ ավատականացներ:

Ամեն դեպքում պետք է նշել, որ թեև Գրիգոր Գ կաթողիկոսի նստավայրը գտնվում էր Կիլիկիայի սահմանագլխին, բայց ոչ Կիլիկիայում, այնուամենայնիվ Հռոմեայում հաստատված Պահակալունի հայրապետները

<sup>1</sup> Կ. Սուբիասյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 200, էջ 373:

<sup>2</sup> Մ. Օրմանյան, հ. Ա, սյուն 1607:

<sup>3</sup> Մ. Օրմանյան, նույն տեղում:

<sup>4</sup> Ա. Սուբիասյան, նշվ. աշխ., էջ ...:

իրենց հոգեւոր իշխանությունը գործադրում էին Կիլիկիայի հայկական պետությունում, ինչպես նաև Մեծ Հայքում, Եղիպատոսում, Բալկաններում, Փոքր Ասիայում, Ասորիքում և այլ վայրերում։ Միջնադարյան պատմիչներից Ստեփանոս Օրբելյանը նշում է, որ Հռոմեան «էր գահ հայրապետացն և ամոռ կաթողիկոսացն հայոց։ Յորում կային անպատճելի սրբութիւնք և նշխարք առաքելական»<sup>1</sup>։

Շատ կարեւոր է նաև նշել, որ Հռոմեան իր անառիկ դիրքով ուներ պաշտպանական մեծ հնարավորություններ և հիմնականում զերծ էր մնում օտար ցեղերից ավերիչ ասպատակություններից։ Բացի այդ, ամրոցը պահպանելու համար զինված պահակախմբից բացի, կաթողիկոսը նաև զորք էր պահում իր տիրույթները պաշտպանելու և հպատակներին իրեն ենթարկելու համար։ Ինչ վերաբերում է Ծովքի դղյակին, ապա պետք է նշել, որ 1149 թ. տեղափոխումից հետո այն մնաց կանգուն, չվերացավ և դիտվում էր որպես վանական հաստատություն։ Այն շարունակեց իր հոգեւոր գործունեությունը բավականին երկար ժամանակ և հետագա դարերում հիշատակվում էր տարբեր պատմիչների աշխատություններում։

Եվ վերջապես կցանկանայինք նաև նշել, որ Հռոմեայի կաթողիկոսարանը մեծագույն դեր կատարեց թե՛ ողջ հայության և թե՛ հայ եկեղեցու կյանքում։ Դրանք հիմնականում հետևյալն էին։

1. Հռոմեայի կաթողիկոսարանը կարողացավ կարգավորել մինչև իրեն սկսված եկեղեցական թեմերի պառակտողական ձգտումները, որը մեծ վնաս էր տվյալ ժամանակաշրջանում թե՛ հայության և թե՛ եկեղեցու միասնության համար։
2. Ոչ պակաս կարեւոր էր նաև այն հանգամանքը, որ կաթողիկոսարանը մեծագույն ներդրում ունեցավ մի շատ կարեւոր խնդրում։ Մեծ աջակցություն ցույց տվեց ժամանակի ամենանշանավոր դեմքերից մեկին՝ Լեռն Մեծագործին և նրա հաջորդներին հայոց պետականության ստեղծման և հետագա պահպանման հարցում։
3. Հայոց կաթողիկոսության նվաճումներից էր նաև այն, որ մեծ ջանքերի գնով, թե՛ բյուզանդական կայսրությունը և թե՛ Հռոմի պապական աթոռը, որոնք մեծ ճիգեր էին գործադրում որպեսզի հայ առաքելական եկեղեցին ընդունի իրենց դավանանքը, ի վերջո ձախողվեցին։

<sup>1</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 443։